



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

25 փետրվարի 2015 թ. №34 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆԿԻՐՎԱԾ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԱՐՉԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «գ» և «ժ.1» կետերի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին
նվիրված 2015 թվականին անցկացվելիք նախազորակոչային և զորակոչային տարիքի
երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի կանոնակարգը՝
համաձայն № 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության մարզերի այն տարածաշրջանների և Երևան
քաղաքի վարչական շրջանների ցանկը, որտեղ անցկացվելու են ռազմամարզական
խաղերի 2-րդ՝ տարածաշրջանային փուլի մրցումները՝ համաձայն № 2 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված խաղերն իրականացվում են
«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի
№ 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 01 խմբի 01 դասի «04. Նախազորակոչային և
զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի
անցկացում» ծրագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի
իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի
Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
Խաչիկ Ասրյանին:



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԾԻՆ
ՆՎԻՐՎԱԾ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆԳԿԱԳՎԵԼԻՔ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ
ՉՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված 2015 թվականին անցկացվելիք նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի (այսուհետ՝ ռազմամարզական խաղեր) նպատակներն են՝

1) նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորում.

2) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և Հայաստանի Հանրապետության ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում:

2. Ռազմամարզական խաղերի խնդիրներն են՝

1) ավագ տարիքի դպրոցականների ֆիզիկական պատրաստականության մոնիտորինգի անցկացում.

2) դպրոցականների և երիտասարդության շրջանում իրականացվող ռազմահայրենասիրական դաստիարակության և զանգվածային մարզական աշխատանքների հետագա բարելավում:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Ռազմամարզական խաղերի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն): Ռազմամարզական խաղերի անցկացմանը աջակցում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատները և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

4. Ռազմամարզական խաղերն անցկացվում են 4 փուլով: Խաղերի կազմակերպման ու անցկացման պատասխանատվությունը ըստ փուլերի կրում են՝

1) 1-ին փուլում հանրակրթական դպրոցների տնօրենները.

2) 2-րդ և 3-րդ փուլերում՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը, Նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը.

3) 4-րդ փուլում (եզրափակիչ մրցումներ) Նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից հաստատված ռազմամարզական խաղերի մրցավարական հանձնաժողովը:

3. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Ռազմամարզական խաղերն անցկացվում են 2015 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, 4 փուլով՝

1) 1-ին փուլ - ներդպրոցական զանգվածային մրցումներ, սեպտեմբեր ամսին,

2) 2-րդ փուլ - տարածաշրջանային և Երևան քաղաքի վարչական շրջանների մրցումներ, հոկտեմբերի 1-14-ը.

3) 3-րդ փուլ - Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի առաջնություններ, հոկտեմբերի 18-26-ը.

4) 4-րդ փուլ - եզրափակիչ մրցումներ, 2015 թվականի նոյեմբերի 2-5-ը, Երևան քաղաքում՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում:

4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

6. Ռազմամարզական խաղերին մասնակցում են հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարաններից ձևավորված հավաքական թիմերը: Թիմի կազմը՝ 9 մարզիկ և 1 մարզիչ-ներկայացուցիչ, ընդամենը՝ 10 մարդ:

1-ին՝ ներդպրոցական փուլ - զանգվածային մրցումներ, մասնակցում են բարձր դասարանների աշակերտները,

2-րդ՝ տարածաշրջանային փուլ - մասնակցում են դպրոցների հավաքական թիմերը,

3-րդ՝ մարզային փուլ - մասնակցում են 2-րդ փուլում 1-ին և 2-րդ տեղերը գրաված դպրոցների հավաքական թիմերը,

4-րդ՝ եզրափակիչ փուլ - մասնակցում են 3-րդ փուլում 1-ին տեղը գրաված հանրակրթական դպրոցների հավաքական թիմերը:

5. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

7. Ռազմամարզական խաղերի ծրագրում ներառված են հետևյալ մարզաձևերը՝

1) Նռնակի նետում (Օ-1 ուսումնական): Վարժությունը կատարվում է հատուկ նշագծված տեղում, ազատ ոճով: Գնահատվում է նետումների երկու փորձի լավագույն արդյունքը: Մասնակցում են թիմի բոլոր անդամները:

2) 8 կգ-անոց ուսապարկով փոխանցումավազք (4 x 50 մ): Փոխանցումավազքը անցկացվում է աթլետիկայի կանոնակարգի համաձայն: Մեկնարկը տրվում է մարզիկի կանգնած դրությունից՝ ուսապարկը մեջքին: Յուրաքանչյուր թիմից մասնակցում է 8 մարզիկ:

Հրահանգի համաձայն 1-ին համարի մասնակիցը ուսապարկը մեջքին վազքով անցնում է տարածքը և էստաֆետը հանձնում հաջորդ համարի մասնակցին: 2-րդ համարի մասնակիցը արագորեն վերցնում է ուսապարկը (ազատ ոճի բռնվածք), անցնում է տարածքը և էստաֆետը հանձնում հաջորդ համարի մասնակցին: 3-րդ համարի մասնակիցը ուսապարկով վազքով անցնում է տարածքը և էստաֆետը հանձնում բժշկական պատգարակով կանգնած մարզիկներին (2 մարզիկ առջևից, 2-ը՝ հետևից բռնած, իսկ մեկ «վիրավոր» մարզիկը՝ պատգարակի վրա պառկած), և մարզիկները արագ հատում են վերջնագիծը: Հաղթող է ճանաչվում այն թիմը, որը բոլորից արագ է անցել տարածքը:

3) Ձգումներ պտտածողից: Վարժությունը կատարվում է կախ դրությունից, ձեռքերի բռնվածքը՝ ափերը դուրս, ոտքի թաթերը ձգված վիճակում: Վարժությունը համարվում է կատարված միայն այն դեպքում, երբ վերձգման ժամանակ մասնակցի ծնոտը հավասարվում է պտտածողին: Մասնակցում են թիմի բոլոր անդամները:

4) Կրոսավազք (1000 մ): Մրցումն անցկացվում է համաձայն աթլետիկայի կանոնակարգի: Մասնակցում են թիմի բոլոր անդամները:

5) Հրաձգություն (օդամղիչ հրացանով): Մրցումը կազմակերպվում և անցկացվում է Հայաստանի հրաձգության ֆեդերացիայի կանոնակարգի համաձայն: Հեռավորությունը՝ 10 մետր, կանգնած դրությունից (առանց հենման կետի), 2 փորձնական և 5 ստուգիչ կրակոց:

Մասնակցում են թիմի բոլոր անդամները:

Եզրափակիչ փուլում մասնակից դպրոցները մրցումներին մասնակցում են իրենց կողմից բերված օդամղիչ հրացանով:

6) Ինքնաձիգի քանդում-հավաքում: Վարժության կատարման հերթականությունը՝ **քանդելը** 1) հանել փամփուշտակալը, 2) լիցքաթափել ինքնաձիգը՝ փողը դեպի վեր, կատարել ստուգիչ կրակոց, 3) հանել պահատուփը (պատկանելիքը), 4) հանել շամփուրը, 5) հանել փողատուփի կափարիչը, 6) հանել հետադարձ մեխանիզմը, 7) փակաղակի շրջանակը անջատել գազամխոցով, 8) անջատել փակաղակը փակաղակի շրջամակից, 9) հանել գազափակաղակը փողի պահպամակով:

հավաքելը՝ հակառակ հերթականությամբ:

Ինքնաձիգի քանդում-հավաքում վարժության հաշվարկը կատարվում է քանդման և հավաքման ընդհանուր ժամանակով: Մասնակցում են թիմի բոլոր անդամները:

6. ԱՆՅԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Ռազմամարզական խաղերի առանձին մարզաձևերում հաղթող է ճանաչվում տվյալ մարզաձևում առավել բարձր արդյունք ցույց տված մարզիկը:

9. Ընդհանուր թիմային առաջնության հաշվարկը բոլոր փուլերում որոշվում է առանձին մարզաձևերում թիմի 9 անդամների կողմից ձեռք բերված միավորների առավելագույն գումարով:

10. Մեկից ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում առավելությունը տրվում է առանձին մարզաձևերում առավել 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղերը գրաված մարզիկ ունեցող թիմին:

7. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

11. Ռազմամարզական խաղերի 2-րդ (տարածաշրջանային մրցումներ) և 3-րդ (ՀՀ մարզերի և Երևան քաղաքի առաջնություններ) փուլերի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով:

12. Խաղերի 4-րդ փուլում 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված դպրոցները պարգևատրվում են գավաթներով, իսկ մարզիկները՝ մրցանակներով և համապատասխան կարգի հավաստագրերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատի համապատասխան կարգի հավաստագրերով: Խաղերի առանձին 5 մարզաձևերում հաղթողները պարգևատրվում են համապատասխան կարգի հավաստագրերով և մրցանակներով, իսկ փոխանցումավազքի հաղթող թիմը գավաթով և համապատասխան կարգի հավաստագրերով:

8. ԾԱԽՍԵՐԸ

13. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում են ռազմամարզական խաղերի՝

1) 2-րդ փուլի գլխավոր մրցավարական հանձնաժողովի, մրցավարների, բժշկի սննդի, 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված դպրոցներին հավաստագրերով պարգևատրելու,

2) 3-րդ փուլի մասնակիցների սննդի, գիշերավարձի, ճանապարհաձախսի, գլխավոր մրցավարական հանձնաժողովի, մրցավարների, բժշկի սննդի, 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված դպրոցներին հավաստագրերով պարգևատրելու,

3) 4-րդ փուլի մարզիկների գիշերավարձի, ճանապարհաձախսի, սննդի, գլխավոր մրցավարական հանձնաժողովի, մրցավարների, բժիշկների սննդի, տրանսպորտային ծախսերի (Երևանում), հաղթող թիմերին գավաթով, մարզիկներին մրցանակներով, անհատական 5 մարզաձևերում 1-ին տեղերը գրաված մարզիկներին մրցանակներով, փոխանցումավազքի հաղթող թիմին գավաթով պարգևատրելու և հրաձգարանի վարձակալման հետ կապված ծախսերը:

14. Ռազմամարզական խաղերի մրցումների 2-րդ փուլի մասնակիցների տրանսպորտային ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները:

9. ՀԱՅՏԵՐԸ

15. Հանրակրթական դպրոցները ռազմամարզական խաղերի 2-րդ փուլի մասնակցության հայտերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան մինչև 2015 թվականի հոկտեմբերի 30-ը:

16. Ռազմամարզական խաղերի 3-րդ փուլի մասնակցության հայտերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան մինչև 2015 թվականի հոկտեմբերի 18-ը:

17. Ռազմամարզական խաղերի 4-րդ փուլի մասնակցության նախնական հայտերը ներկայացվում են Նախարարություն մինչև 2015 թվականի հոկտեմբերի 31-ը:

18. Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում, և թիմը չի կարող մասնակցել մրցումներին:

19. Անվանական հայտերը գլխավոր մրցավարական հանձնաժողով են ներկայացվում ընդունելության օրը՝ 2015 թվականի նոյեմբերի 2-ին, մինչև ժամը 18.00-ը:

20. Հայտերի հետ ուղղամարզական խաղերի մանդատային հանձնաժողովին ներկայացվում է՝

- 1) անձնագիր կամ ծննդյան վկայական (16 տարին չըրացած անձանց համար),
- 2) տեղեկանք դպրոցից (մասնակցի լուսանկարով և դպրոցի կնիքով):

21. Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը մինչև 2015 թվականի հոկտեմբերի 31-ը Նախարարություն են ներկայացնում խաղերի 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի ամփոփագրերը, մարզային մրցումների արձանագրությունները, հաշվետվությունները, եզրափակիչ մրցումներին մասնակից դպրոցների նախնական հայտերը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Մ. ԱՆԱՆՅԱՆ